ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀԿԳՆԾՁԲ-ՀԿ-13/41

ք. Երևան «-21-»«-01-» 2013թ.

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար՝ Մ. Ղազարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև «Պատվիրատու») մի կողմից և «Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպությունը ի դեմս տնօրեն՝ Ա. Բլեյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ «Կատարող») մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում իրականացնել հանրակրթական ուսուցման շրջանակներում ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն) համաձայն կրթական չափորոշիչների, ընդ որում՝

1. տարրական կրթության ծառայությունը միջին տարեկան 592 աշակերտի համար,
2. ընդհանուր միջնակարգ կրթության ծառայությունը միջին տարեկան 456 աշակերտի համար,
3. միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության ծառայությունը միջին տարեկան 494 աշակերտի համար:

1.2 Ծառայությությունների մատուցման վերջնաժամկետն է 2013 թվականի դեկտեմբերի 25-ը:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Առանց Ծառայության արդյունքի դիմաց վարձատրելու միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Կատարողի կողմից մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սահմանված պահանջներին և (կամ) խախտել է Ծառայության մատուցման ժամկետը և Ծառայությունը չի կարող մատուցվել Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում:

2.1.3 Չընդունել Ծառայության արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անվճար վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.4 Մինչև Ծառայության արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ այդ մասին առնվազն 30 օր առաջ տեղեկացնելով Կատարողին և հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Մինչև Ծառայության արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը, Պատվիրատուի կողմից ցանկացած ժամանակ սույն պայմանագիրը կատարելուց հրաժարվելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու մատուցված Ծառայության համարժեք գինը, բացառությամբ սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված դեպքի:

2.3.2 Մինչև Ծառայության արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները՝ այդ մասին առնվազն 30 օր առաջ տեղեկացնելով Պատվիրատուին:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները:

2.4.3 Սույն պայմանագրի 2.1.3 կետով նախատեսված դեպքում Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում անվճար ապահովել թերությունների վերացումը և Պատվիրատուին վճարել սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.4.4 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարողը 2013թ մատուցված Ծառայության ավարտից հետո 5 օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ:

3.2 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.3 Կատարողի մատուցած Ծառայության արդյունքը Պատվիրատուի կողմից ընդունված է համարվում երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցած Ծառայության ընդհանուր գինը կազմում է 280296300 (երկու հարյուր ութսուն միլիոն երկու հարյուր իննսունվեց հազար երեք հարյուր) ՀՀ դրամ, ընդ որում՝

1. տարրական կրթության ծառայություն - 91462600 դրամ,
2. ընդհանուր միջնակարգ կրթության ծառայություն - 86251200 դրամ,
3. միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության ծառայություն - 102582500 դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերի, տուրքերի, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և շահույթը: Սույն պայմանագրի գինը կարող է փոփոխվել 2013թ սեպտեմբերի 10-ի դրությամբ դասարանների փաստացի կոմպլեկտավորման արդյունքներով պայմանավորված:

4.2 Պատվիրատուն սույն պայմանագրի 4.1 կետում նշված գումարը Կատարողին վճարում է հետևյալ կերպ՝

ա/ մինչև 2013 թվականի նոյեմբեր ամիսը ներառյալ մատուցված ծառայությունների դիմաց վճարումները կատարվում են միանվագ կարգով, ամսական կտրվածքով, մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 10-րդ աշխատանքային օրը, որպես կանխավճար, որը մարվում է մինչև 2013 թվականի դեկտեմբերի 25-ը ներառյալ՝ հանձման–ընդունման արձանագրությամբ.

բ/ 2013 թվականի դեկտեմբեր ամսին մատուցվելիք ծառայությունների դիմաց վճարումները կատարվում են միանվագ կարգով մինչև ս. թ–ի դեկտեմբերի 25-ը, որպես կանխավճար, որը մարվում է մինչև 2013 թվականի դեկտեմբերի 25-ը ներառյալ՝ հանձման–ընդունման արձանագրությամբ:

4.3 Պատվիրատուն գումարները վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայությունների որակի և սահմանված պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման և 2.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Ծառայությունները չընդունվելու, ինչպես նաև 1.2 կետով նախատեսված ժամկետը խախտելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0.5 %-ի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայությունների մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ Պայմանագրի գնի 0.05%-ի չափով, իսկ տույժերի հաշվարկումն իրականացվում է օրացույցային օրերով՝ պայմանագրի չկատարած մասի գնի նկատմամբ: Սույն պայմանագրի 5.8 կետով նախատեսված դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ Պատվիրատուին հետ վերադարձման ենթակա գումարի 0,05 տոկոսի չափով:

5.4 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

5.5 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հետ են գանձվում Կատարողին որպես կանխավճար փոխանցված գումարից:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տուգանքի և տույժի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

5.8 2013 թվականի ընթացքում Կատարողի կողմից մատուցված ծառայությունների դիմաց Կատարողին՝ կանխավճարի ձևով կատարված վճարումների և փաստացի մատուցված ծառայությունների մատուցման արդյունքների միջև դրական տարբերության դեպքում Կատարողը պարտավորվում է հանձնման–ընդունման արձանագրությունը երկկողմ կազմվելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին վերադարձնել ավել վճարված գումարները:

5.9 Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների կատարման վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև սույն պայմանագրի կնքումը Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ) կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում ՀՀ օրենսդրությանը, ապա, այդ հիմքերը ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել սույն գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև սույն պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային սույն պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել Պատվիրատուի կրած

վնասներն, այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը սույն պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պարտավորությունների լրիվ կատարումը: Սույն պայմանագրի պայմանները կիրառվում են 2013 թվականի հունվարի 1-ից կողմերի միջև ծագած հարաբերությունների նկատմամբ:

7.2. Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.3 Սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը՝ սույն պայմանագրի կողմերից որևէ մեկի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

7.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

7.5 Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.6 Սույն պայմանագիրը կազմված է 3 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ ա տ վ ի ր ա տ ու	Կ ա տ ա ր ո ղ
ՀՀ կրթության և գիտության նախարարություն	«Երևանի «Մխիթար Սեբաստացի»
ք. Երևան, Վարդանանց 5	կրթահամալիր» ՊՈԱԿ
ՀՀ ՖՆ աշխատակազմի	ք. Երևան, Ա. Բաբաջանյան 25
գործառնական վարչություն	Հայէկոնոմբանկի «Մետաքս» մ/ճ
Հ/Հ 90001100	Հ/Հ 163218137665
Նախարարության աշխատակազմի	ՀՎՀՀ 01804186
ղեկավար՝	Տնօրեն՝
---------- Մ. Ղազարյան	---------- Ա. Բլեյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ